ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

ԿԱԶՄԵՑ՝ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՍԱԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2016Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 34 ՈՐՈՇՄԱՄԲ

ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ 2016Թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ
1.3. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
1.4.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ
1.5.ՀԱՄԱՅՄՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ
1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ
1.10. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
1.13.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
1.14.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ
1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ
1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1.17.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
1.2.Համայնքի ռազմավարությունն է.
1.3.Հիմնական նպատակները

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3.2. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ
3.3. ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
3.4. ԱՊԱՌՔՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
3.5 ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
3.6. ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ,
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԳՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵԱԿԵՐՊՈՒՄ

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՍՅԱ ԾՐԱԳՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ. թիվ 1. 2. 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի 2017-2021թթ. համալիր զարգացման ծրագիրը մշակված է ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիներին վերապահված իրավասությունների շրջանակներում և հանդիսանում է համայնքի համալիր զարգացմանն ուղղված ուղեցույց փաստաթուղթ:

Ծրագրի հիմքում դրված են համայնքում առկա առաջնային հիմնախնդիրների լուծմանն ու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքում մատուցվող ծառայությունների ծավալների ավելացմանն ուղղված համայնքի ղեկավարի նախընտրական ծրագրի դրույթներն ու համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները : Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների /բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային/ հաշվառման արդյունքում:

Այն տարածաշրջանի գյուղական համայնքները բնութագրող և նրա զարգացումը նախանշող ուղեցույց փաստաթուղթ է, որը կարող է իր արձագանքը գտնել կառավարության տարածքային զարգացման քաղաքականության, գյուղական համայնքների համաչափ զարգացման և աղքատության կրճատման ռազմավարական ծրագրերում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են համայնքի ֆինասական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները, կատարվել են իրավիճակի վերլուծություններ և կանխատեսումներ, ներկայացվել են վիճակագրական տեղեկություններ:

Ծրագրում ներառված խնդիրները և դրանց առաջնահերթությունները չեն հավակնում լինել վերջնական և ծրագրերի իրականացման ընթացքում արտաքին և ներքին գործոնների ազդեցությունից ենթադրվում են համապատասխան փոփոխություններ:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թուրքական դարավոր բռնատիրությունից ազատագրվելու համար 1828- 1830 թթ. բնակավայրի նախնիները Արևմտյան Հայաստանից զանգվածաբար գաղթել են Արևելյան Հայաստան: Դա մի տեղաշարժ է եղել անկախությունը կորցրած հարազատ հայրենիքի մի վայրից՝ մյուսը:

1829թ. սեպտեմբերի 2-ի Ադրիանապոլիսի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանը միանալով Ռուսաստանին, կարողացավ ապահովել իր խաղաղ գոյակցությունը:

Ըստ տոհմագրական տվյալների Գուսանագյուղը հիմնադրել է 1828թ.: Ընտանիքներ են վերաբնակեցվել Երզրումի վիլայեթի Բայազետ գավառի Ալաշկերտ քաղաքից:

Ըստ հայտնաբերված հնագիտական հուշարձանների տեղագրության տեղանքը բնակեցված է եղել դեռևս վաղ բրոնզե դարում: Բնակավայրում պահպանվել է սրբատաշ սև տուֆից կառուցված դղյակի ավերակներ, որը կառուցվել է XII- XIII դդ., ավելի հին՝ դեռևս նախնադարյան շրջանի կիկլոպյան ամրոցի տեղում: Բնակավայրի տեղում կան հին բնակավայրի բազիլիկ եկեղեցու կիկլոպյան երկու ամրոցի մնացորդներ, տարբեր տիպի դամբարաններ, խաչքարերի քանդակազարդ բեկորներ, որոնց նուրբ մշակումը բնորոշ է XII- XIII դդ.:

Թուրքերը իրենց տիրապետության սահմաններում թուրքացրել են տեղանունները՝ անկախ բնակավայրի էթնիկական կազմից: Գուսանագյուղը մինչև 1947թ.-ը կոչվել է Ղափլի, որը թարգմանաբար նշանակում է « Քարե դուռ»:

Գյուղ Անիի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 21կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Գափուլու, Կապլի, Կապուլի, Կափուլի, Ղափըլչի, Ղափլու, Ղափչի, Ղափուլու անվանումները: Գտնվում է Երևան-Գյումրի երկաթուղու վրա: Գուսանագյուղ է վերանվանվել 1977 թ-ին:
Գյուղը տեղադրված է Ախուրյան գետի ձախափնյակում՝ ծովի մակարդակից 1500մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տնական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները: Ունի անդեզիտաբազալտի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն:
Գյուղն ունի կանգուն եկեղեցի (11-րդ դար): Շրջակայքում պահպանվել են նախնադարյան և ուրարտական ժամանակներին վերաբերող հնավայրեր՝ ավերակ բերդ, որին տեղացիներին նվանում են Ղալա: Պահպանվել են նաև կիկլոպյան շինությունների հետքեր: Բնակչության նախնիների մի մասը այստեղ են գաղթել 182Ր-1830թթ Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Բուլանըղի, Մուշի շրջաններից: 1831 թ-ին գյուղն ունեցել է 138, 1897 թ-ին՝ 1466, 1926 թ-ին՝ 1062, 1939 թ-ին՝ 1433, 1959 թ-ին՝ 1207, 1970 թ-ին՝ 978, 1979 թ-ին՝ 876 հայ բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2005 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 898 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 46%, կանայք՝ 54%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 32%, աշխատունակների՝ 49%, հետաշխատունակներ՝ 19%: Ունի 97 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, հիվանդանոց, կապի հանգույց:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 668հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 368 և 995 հեկտար: Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: Զբաղվում են նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

1887թ. Ղափլին ընդգրկվել է Ալեքսանդրապոլի գավառի կազմում: 1921թ. բնակավայրը ընդգրկվել է խորհրդային Հայաստանի կազմում: 1937թ. մինչև 1996թ. բնակավայրը

ընդգրկված է եղել Անիի շրջանի կազմում: 1996թ.-ի ՀՀ վարչատարածքային վերջին բաժանումից հետո Գուսանագյուղը որպես վարչական առանձին միավոր / համայնք/ ընդգրկվեց ՀՀ Շիրակի մարզի կազմում:

1.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Գուսանագյուղը տեղակայված է Արագած լեռան հյուսիս-արևմտյան լանջին, Շիրակի դաշտավայրի հարավ-արևմտյան և Թալինի սարավանդակի հյուսիսային մասում:

Թուրքիայի սահմանից գտնվում է 3 կմ. հեռավորության վրա:

Ծովի մակերևույթից բարձր է 1450մ.: Բնակավայրը ընդգրկված է հանրապետության նախալեռնային բնակավայրերի ցանկում:

Բնակավայրին առանձնահատուկ են ցուրտ, խստաշունչ, ձյունառատ ձմեռները և զով ամառային եղանակները: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 7-8 աստիճան: Տարեկան միջին տեղումները կազմում են 350-600մմ., որոնք առանձնահատուկ են ապրիլ-մայիս ամիսներին: Տարածքում գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը: Հարուստ է տուֆ և բազալտ քարերով, շինարարական ավազով ու կավով: Բնակավայրի տարածքում կա ծծմբով հարստացված բնական հանքային աղբյուր, հարուստ է արդեզյան ջրերով: Բնակավայրի տարածքը մշտապես վտանգված է կարկտահարությամբ և տևական

Երաշտով:Տարածքը գտնվում է սեյսմիկ գոտում:Հիշարյան են 1926 և 1988թթ աղետալի երկրաշարժերը:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2352.7հա,որից գյուղատնտեսական նշանակության հողեր են 2094.5հա-ը,այդ թվում
1054.6հա՝վարելահող,995հա՝արոտավայր,4հա՝խոտհարք:

Համայնքի կառուցապատված տարածքը զբաղեցնում է 172.3հա:

Բնակավայրը գտնվում է նախկին շրջկենտրոնից 12կմ մարզկենտրոնից 21կմ և մայրաքաղաքից՝110կմ հեռավորության վրա:Երևան –Գյումրի մայրուղին անցնում է բնակավայրից 4 կմ ,իսկ երկաթուղին 2 կմ հեռավորության վրա:

1.3 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն տոհմագրական տեղեկությունների բնակավայրը հիմնադրվել է 1828թթ:

Հիմնադիրները եղել են Ալաշկերտից գաղթած Այվազյանների գերդաստանը՝իր չորս որդիներով՝Ավետիք,Դավիթ,/Հաջ Մակար և Մարգար/ հարյուրապետ:

Մինչև 1848թ ըստ վիճակագրական տեղեկությունների գյուղում բնակություն են հաստատել 60 ընտանիք: Գյուղում բնակություն են հաստատել նաև Խնուսից,Բասենից,Կարսի նահանգից գաղթած ընտանիքներ:1915թ բնակավայր են տեղափոխվել Մուշից գաղթած 8 ընտանիք:1940-ական թթ-ին գյուղի բնակչության թիվը կազմել է շուրջ 1800 մարդ:

Հայրենական Մեծ պատերազմից հետո բնակչության թիվը կտրուկ նվազել է :

Ըստ 2009թ հունվար ամսի հաշվառման բնակավայրն ունի ժողովրդագրական հետևյալ տվյալները՝

•Բնակչությունը-936

այդ թվում՝

.Տղամարդ-451

.Կին-485

.Ընտանիքների թիվը-231

.Նախադպրոցական տարիքի երեխաներ/0-5 տարեկան-73

.Դպրոցական տարիքի երեխաներ/6-18 տարեկան-99

.Հասուն տարիքի բնակչություն/18-60 տարեկան-500

.Տարեց բնակչություն /61 և ավելի –120

.Ընտրողների թիվը-708

.Կենսաթոշակառուներ-110

.Մանկուց հաշմանդամներ-8

.Ազատամարտիկներ-24

.Բռնազաղթվածներ-2

.Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքներ-27

.Աշխատունակ բնակչություն -609

.Այլազգիներ -5

1.4 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ժողովրդի իշխանությունն իրականացնելու և համայնքային խնդիրները լուծելու նպատակով համայնքում օրենքով սահմանված կարգով ընտրված են համայնքի ավագանի/ ավագանու 5անդամ/և համայնքի ղեկավար:2016թ հոկտեմբերի 2-ին համայնքում կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների արդյունքով,առաջադրված 2 թեկնածուներից, համայնքի ղեկավար է ընտրվել գործող ղեկավար Վասակ Ղազարյանը:Դադարեցվել է ավագանու երկու անդամի լիազորությունները՝անհարգելի բացակայությունների պատճառով:

<<Տեղական ինքնակառավարման մասին >>և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքների համաձայն ձևավորվել է համայնքի ղեկավարի աշխատակազմ հետևյալ կառուցվածքով.

Հայեցողական Պաշտոններ՝

.Համայնքի ղեկավարի տեղակալ -1 միավոր

Համայնքային ծառայության պաշտոններ՝

.Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար-1 միավոր

. Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ-1 միավոր

. Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-1միավոր

. Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-1միավոր

Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ

.Գրադարանավար -1 միավոր

.Հարկային գործակալ-1 միավոր

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱԶՄԸ

N	Անուն Ազգանուն	Ծնող թիվը	Կրթություն	Կուս պատկան
1.	Խաչիկ Հարությունյան	1962	միջնակարգ	անկուս
2.	Սամվել Սահակյան	1961	միջնակարգ	անկուս
3.	Արամայիս Պետրոսյան	1957	միջնակարգ	անկուս

Համայնքի Ղեկավարի Աշխատակազմ

N	Անուն Ազգանուն	Պաշտոնը	Կրթություն	Ծնող թիվը
1	Վասակ Ղազարյան	Համայնքի ղեկավար	Միջն մասնագ	1964թ
2	Արտյոմ Հարությունյան	Համայնքի ղեկ տեղակալ	միջնակարգ	1974թ
3	Արթուր Ղազարյան	Աշխատակազմի քարտուղ ժպ	միջնակարգ	1989թ
4	Արգամ Մկրտչյան	Առաջատար մասնագետ հաշվ	բարձրագույն	1983թ
5	Արտակ Ղազարյան	Առաջատար մասնագետ	բարձրագույն	1987թ
6	Սմբատ Քամալյան	Հարկային գործակալ	միջնակարգ	1955թ
7	Գալուստ Անտոնյան	Առաջատար մասնագետ	Միջ միջնակարգ	1974թ
8	Ավոյան Լուսիկ	Գրադարանավար	Միջ միջնակարգ	1953թ

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և ներքին հարաբերությունները գրաֆիկական տեսքով ներկայացված է թիվ 1 հավելվածում:

1.5.ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.« ՀՀ համայնքների սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին» թիվ 51 որոշմամբ:

Համայնքի գույքը ֆիզիկական և բարոյական մեծ մաշվածություն ունի: Քայքայված և անբարեկարգ վիճակում է մշակույթի տունը: Շենքային հարմարությունների բացակայության պատճառով անմխիթար վիճակում է գրադարանի 12 000 կտոր գրականության պահպանությունը:

2007թ. ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց » ծրագրի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ նորոգվել է գյողապետարանի շենքը և որոշակի հարմարություններ են ստեղծվել համայնքի ղեկավարի աշխատակազմի գործունեության համար:

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1960-ական թվականներին:

2007-2008թթ Համաշխարհային բանկի « Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության» ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ համայնքում իրականացված «Գուսանագյուղ համայնքի խմելու ջրագծի կառուցում, ՕԿՋ-ի վերակառուցում» ծրագրի արդյունքում/ ծրագրի բյուջեն՝ 17.8 մլն դրամ/ բարելավվեց համայնքի խմելու ջրի մատակարարման վիճակը: 2006-2007թթ. համայնքի խմելու ջրի ներտնտեսային ցանցի բարելավմանն ուղղված 3 ծրագրեր են իրականացվել նաև ՄԱԿ-ի ՀՊԾ «Սնունդ աշխատանքի դիմաց » , « Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերի աջակցությամբ և համայնքի կողմից կատարված ներդրումների շնորհիվ: Չնայած իրականացված ծրագրերին, համայնքի առանձին թաղամասերի խմելու ջրի մատակարարումը դեռևս մնում է անբավարար: Հաճախակի են ցանցի վթարներն ու ջրի աղտոտումները, ծայրամասային առանձին թաղամասեր ապահովված չեն խմելու ջրով, դեռևս տեղադրված չեն ջրաչափեր:

Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային ճանապարհները: Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ ստեղծվել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար:

Համեմատաբար բարվոք վիճակում է գյուղի բուժ. մանկաբարձական կետը,որը 1999թ.-ին կառուցվել է «Շեն» բարեգործական կազմակերպության կողմից:

Գազաֆիկացված է բնակավայրի 80%-ը և այն ընդլայնման կարիք ունի:

Շնորհիվ Համաշխարհային բանկի « Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության» ծրագրի և համայնքի կողմից կատարված ներդրման 2008թ. համայնքը սեփականության գույքի ցանկը համալրվել է 10.2 մլն. դրամ ընդհանուր արժեքով1 հատ ՄՏՋ մակնիշի տրակտորով և մեկ հատ շարքացանով:

Համայնքի սեփականության գույքի ցանկը ներկայացված է թիվ 2 հավելվածում:

1.6.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնակավայրը չունի կեղտաջրերի և անձրևաջրերի հեռացման համակարգեր: Կեղտաջրերի հեռացումը համայնքում կատարվում է անհատական խորքային հորերի միջոցով: Բնակավայրում աղբահանությունը կատարվում է համայնքի բնակիչների կողմից անհատական նախաձեռնությամբ և սանիտարական օրեր կազմակերպելու միջոցով:

1.7.ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 230 անհատական առանձնատուն՝ 28750ք.մ. ընդհանուր մակերեսով: Բնակավայրը գտնվելով 1988թ. «Սպիտակի» աղետալի երկրաշարժի գոտում, համայնքի բնակֆոնդի մոտ 30%-ը ունեն 2-4 աստիճանի վնասվածություն:

Համայնքի 15 ընտանիք ունեն անօթևանի կարգավիճակ, որոնք բնակվում են տնակներում և հարմարեցված կացարաններում: Կան 17 առանձնատների անավարտ շինարարություն, որոնք միջոցների բացակայության պատճառով չեն շարունակվում: Համայնքում բազմաբնակարան բնակելի շենքեր չկան:

Բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեն համայնքի 18 երիտասարդ ընտանիքներ:

1.8. ԽՄԵԼՈՒ և ՈՌՈԳՄԱՆ ՋՈՒՐ

Համյնքի խմելու ջուրը մատակարարվուրմ « Կրասար-Մարալիկ » մայր ջրատարից ինքնահոս եղանակով: Բնակավայրը ունի օրվա կարգավորման 2 ջրամբար՝ 2000խ.մ. և 500խ.մ. տարողություններով: Ներտնտեսային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 3000մ. : Համայնքի ջրամատակարարումը կատարվում է ժամային գրաֆիկով , օրական՝ 6 - 8 ժամ տևողությամբ: Համայնքի ջրամատակարարման ցանցի առանձին տեղամասեր քայքայված են և նորոգման կարիք ունեն: Հաճախակի են ցանցի վթարներն ու ջրի աղտոտումները, ծայրամասային առանձին թաղամասեր ապահովված չեն խմելու ջրով, դեռևս տեղադրված չեն ջրաչափեր:

Համայնքը չունի ոռոգման համակարգ: Բնակավայրի հարևանությամբ է գտնվում Ախուրյանի ջրամբարը, տարածքը հարուստ է արտեզյան ջրերով և ցանցի առկայության

դեպքում նշված ջրային պաշարները կարող են օգտագործվել համայնքի ոռոգման կարիքների համար:

1.9. ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՊ

Միջհամայնքայի ճանապարհը ասֆալտապատ է:
Անբարեկարգ և քայքայված վիճակում են ներհամայնքային ճանապարհները: Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների առանձին տեղամասեր դարձել են անանցանելի և լուրջ դժվարություններ են ստեղծվում գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման ժամանակ:
Բնակավայրը ունի փոստային բաժանմունք և ապահովված է հեռախոսակապով:
Բնակավայրը ընդունում է 4 հանրապետական և 3 մարզային հեռուստաալիքներ:
Բնակավայր - մարզկենտրոն տրանսպորտային կապը ապահովվում է միկրոավտոբուսի 3 երթուղու միջոցով : Մայրաքաղաքի և համայնքների հետ կապը ապահովվում է Մարալիկ-Արմավիր-Երևան երթուղային ավտոբուսի միջոցով:

1.11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքը համախմբված է, որը սակայն չի հանգեցրել սոցիալական այնպիսի ինստիտուտների ձևավորման, ինչպիսին են միությունները, միավորումները, նախաձեռնող խմբերը և այլն: Բնակչությունը սերտ կապեր ունի մոտակա բոլոր համայնքների հետ:
Համայնքը համագործակցության կապեր ունի հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների և հիմնադրամների հետ:
Հոգևոր ոլորտում համայնքը համագործակցում է Շիրակի թեմի Առաջնորդարանի հետ:

1.11.ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքի վարչական տարածքը 2352.7հա. է, որից՝
1. Գյուղ. նշանակության հողեր – 2094.5
այդ թվում՝

- վարելահողեր – 1054.6 հա.
  այդ թվում
  -սեփականաշնորհված – 668.6 հա
  -համայնքային սեփականության – 386.0 հա.

- խոտհարքներ – 4.0 հա.
- արոտավայրեր – 995 հա.
- այլ հողատեսքեր – 40.9 հա.
- սեփականաշնորհված մեկ հողբաժնի չափը – 1.85 հա.

2. Բնակավայրի հողեր – 172.3 հա.
3. Արդյունաբերական, արտադրական նշ հողեր 17.6 հա.
4. Հանքավայրերի հողեր – 6.4հա
5. Ճանապարհների տակ օգտագործվող հողեր – 2.4 հա.
6. Պատմամշակութային նշ. հողեր – 29.1 հա.
7. Ջրային ֆոնդի հողեր – 4.7հա.
8. հատուկ նշ. հողեր – 25.7 հա.

1.12. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղտնտեսության բնագավառի հիմնական ճյուղերը հացահատիկային կուլտուրաների մշակությունն ու անասնապահությունն են: Ոռոգման ջրի բացակայության պատճառով համայնքը լուրջ դժվարությունների առաջ է կանգնած գյուղ.մթերքների կայուն արտադրություն կազմակերպելու հարցում:

Համայնքում կազմավորված են 226 գյուղացիական տնտեսություններ, որոնց կողմից մշակվում է 1006 հա. վարելահող: Դաշտավարության բնագավառում տնտեսությունները հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կերային մշակաբույսերի, մասամբ կարտոֆիլի, կաղամբի և բանջարա- բոստանային այլ կուլտուրաների արտադրությամբ: Արտադրության արդյունավետությունը կախված է բնակլիմայական բարենպաստ պայմաններից: Ցանկատարածությունները մշտապես վտանգված են երաշտով և կարկտահարությամբ: Հացահատիկային կուլտուրաների միջին բերքատվությունը բնակլիմայական բարենպաստ պայմաններում կազմում է 20-30 ցենտներ: Երաշտի կամ կարկտահարության դեպքում կորուստը կազմում է 50-80%: Գյուղացիական տնտեսությունների կողմից պահվում է 815 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, այդ թվում կովեր՝ 618 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 1200: Առանձին տնտեսություններ զբաղվում են նաև խոզաբուծությամբ, թռչնաբուծությամբ և մեղվապահությամբ:

Գյուղում կա 25 տրակտոր, 5 կոմբայն, 1 խոտհնձիչ, 20 բեռնատար ավտոմեքենա և տասնյակ գյուղ մեխանիզմներ ու գործիքներ:

Գյուղտնտեսական մեքենաներն ու մեխանիզմները բարոյապես և ֆիզիկապես մաշված են, կա պահեստամասերի մեծ պահանջարկ:

Գյուղում կա մեկ ալրաղաց, որը լիովին բավարարում է բնակչության պահանջները:

Համայքի գյուղատնտեսության ոլորտի ցուցանիշները ներկայացված են թիվ 3 հավելվածում:

1.13.ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի հանրակրթական մեկ դպրոց, որտեղ սովորում են 110 աշակերտ: 2009-2012թթ դպրոցը ենթարկվել է հիմնական վերանորոգման պետ. բյուջեի հաշվին: Դպրոցն ունի 20 մանկավարժ և 6 սպասարկող անձնակազմ: Համայնքի միակ մշակութային օջախը Մշակույթի տունն է : Մշակույթի տանն է տեղակայված գյուղական գրադարանը , որն ունի 12 000 կտոր գրականություն: Մշակույթի տունը կառուցվել է 1960- ական թթ. և մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել: Շենքի քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով այն գրեթե չի օգտագործվում և չի ծառայում համայնքի կարիքների համար: Հարմարություններ չկան համայնքի բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպման, երեխաների մշակութային և գեղագիտական դաստիարակության համար:

Համայնքը ունի ֆուտբոլի մարզադաշտ , որը նույնպես գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում : Միջոցների բացակայության պատճառով համայնքը չի կարող սեփական նախաձեռնությամբ կազմակերպել համայնքի Մշակույթի տան և մարզադաշտի նորոգման և գույքային համալրման աշխատանքները:

Համայնքում գործու է նախակրթարան , որը գտնվում է դպրոցի շենքում:

Համայնքի բնակչության առողջապահական սպասարկումը իրականացվում է Մարալիկի առողջության կենտրոնի և համայնքի բուժ. մանկաբարձական կետի միջոցով: Համայնքի բուժ. մանկաբարձական կետը կառուցվել է 1999թ. « Շեն » բարեգործական կազմակերպության կողմից:

1.14.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Բերրի վարելահողերի առկայությունը
- Բազալտի, տուֆ քարի, շինարակական ավազի և կավի առկայությունը
- Ախուրյանի ջրամբարի հարևանությամբ գտնվելը / 2կմ /
- Երևան - Գյումրի մայրուղուն մոտ գտնվելը / 3կմ /
- Երկաթուղային կապին մոտ գտնվելը / 5կմ /
- Արտեզյան ջրերի մեծ պաշարի առկայությունը
- Ինքնահոս խմելու ջրի առկայությունը
- Գյուղի գազաֆիկացված լինելը
- Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կադրերի, բանվորական աշխատուժի առկայությունը
- Պատմա-մշակութային հուշարձանների առկայությունը:

1.15.ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ոռոգելի վարելահողերի բացակայությունը
- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- 1988 թ. երկրաշարժի հետևանքով համայնքի բնակֆոնդի վնասվածությունը
- Անօթևանի կարգավիճակում գտնվող 15 ընտանիքների առկայությունը
- Համայնքի բնակչության սոցիալական անապահով վիճակը և ցածր կենսապայմանները
- 17 անավարտ անհատական բնակարանային շինարարությունը
- Բնակ. պայմանների բարելավման կարիք ունեցող 18 երիտասարդ ընտանիքների առկայությունը
- Դպրոցի, մշակույթի տան և մարզադաշտի քայքայված ու անբարեկարգ վիճակը
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի առանձին թաղամասերի քայքայվածությունը
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայվածությունը
- Գործազրկության բարձր մակարդակը
- Երիտասարդ ընտանիքների արտահոսքը համայնքից
- Տեղական բյուջեի սահմանափակ միջոցները

1.16.ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բազալտի և տուֆի հանքերի շահագործման վերամշակման միջոցով նոր աշխատատեղերի ստեղծում
- Ախուրյանի ջրամբարի և արտեզյան ստորգետնյա ջրային ռեսուրսների բազայի վրա ոռոգման համակարգի կառուցում
- Երկարաժամկետ և մատչելի տոկոսադրույքներով գյուղատնտեսական նպատակային վարկերի միջոցով գյուղմթերքների արտադրության ավելացում, վերամշակող փոքր ձեռնարկությունների հիմնադրում:

1.17.ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

- Սեյսմիկ գոտում գտնվելու հանգամանքը
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի առանձին թաղամասերի քայքայվածությունը,
- խմելու ջրի աղտոտումները
- Կոյուղաջրերի հեռացման ցանցի բացակայությունը
- Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները

- Բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանները
- Երիտասարդ ընտանիքների արտագաղթը

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1.2.Համայնքի ռազմավարությունն է.

Տնտեսական և սոցիալական ոլորտների բարեփոխումների ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, բարձրացնել բնակչության կենսամակարդակը:

Գործարար նախաձեռնությունների խթանման, փոքր և միջին բիզնեսի զարգացման միջոցով ավելացնել նոր աշխատատեղեր և կանխել արտագաղթը համայնքից:

Հայրենի գյուղը դարձնել բարեկարգ և օրինակելի գյուղական համայնք:

1.3.Հիմնական նպատակները

- Բնակավայրի կոյուղու ցանցի կառուցում.
- Խմելու ջրի ներտնտեսային ցանցի նորոգում, ցանցի ընդլայնում.
- Մշակույթի տան հիմնանորոգում.
- Մարզադաշտի հիմնանորոգում.
- Մանկապարտեզի կառուցում.
- Ներհամանքային ճանապարհների նորոգում.
- Գազաֆիկացման ցանցի ընդլայնում.
- Ոռոգման ցանցի կառուցում, այդ նպատակին բնակավայրում առկա արտեզյան ջրային պաշարների օգտագործում.
- Գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների զարգացում.
- Բազալտի հանքի շահագործում.
- համայնքում գործարար նախաձեռնությունների խթանում, փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության զարգացում.
- Անօթևանի կարգավիճակ ունեցող 15 ընտանիքների բնակարանի ապահովում, անհատական բնակարանային շինարարության խթանում.
- համայնքի մշակութային կյանքի աշխուժացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում.
- Համայնքը սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն.

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

3.1 ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ծառայություններ մատուցելու և ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից և վարձակալության տրված համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերի վարձավճարներից: Նախորդ տարիներին համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել են 70-90 տոկոսով: Վերջին երեք տարիներին բյուջեի մուտքերի հիմնական մասը նպատակաուղղվել է ընթացիք աշխատավարձերի վճարմանը, համայնքում ծրագրերի իրականացման համար ներդրումների կատարմանն ու փոքրածավալ ծառայությունների մատուցմանը:

Համայնքի տեղական բյուջեի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս լուծելու համայնքում առկա և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրները:

Համայնքում առկա հիմնախնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է պետական և հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

Համայնքը պատրաստակամ է բաժնեմասային /համաֆինանսավորման/ կարգով մասնակցություն ունենալ այլ կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին, որի համար համֆինանսավորման աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի բյուջեի սեփական միջոցները, համայնքի սեպականություն հանդիսացող հողատարածքների օտարումից գոյացող միջոցները, ինչպես նաև համայնքի բնակչության կողմից կատարվող ներդրումները:

3.2 ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հ/Հ	Եկամուտի տեսակը	2016թ. Փաստացի կատարված ը	2017թ. Նախա-տեսված	2018թ. Կանխա-տեսում	2019թ. Կանխա-տեսում	2020թ. Կանխա-տեսում	2021թ. Կանխա-տեսում
	Եկամուտ-ներ, ընդամենը	21625,9	21331,1	22006,7	22505,6	23225,5	23358,0
Ա	Հարկային եկամուտներ	3974,0	3934,5	3699,8	3691,4	3726,2	3733,2
1	Հողի հարկ	2600,0	2600,0	2452,5	2335,6	2368,8	2384,1
2	Գույքա հարկ	1374,0	1358,0	1340,2	1345,6	1357,4	1349,1
4	Այլ հարկային եկամուտներ	24,0	24,0	24,0	24,0	24,0	24,0
Բ	Տուրքեր	64,0	100,0	75,0	75,0	50,0	50,0
1	Պետական տուրքեր	---	---	---	---	---	---
2	Տեղական տուրքեր	64,0	100,0	75,0	75,0	50,0	50,0
Գ	Ոչ հարկային եկամուտ-ներ	2298,8	2131,7	2131,9	2215,2	2301,3	2315,6
1	Համայնքային սեփականութ հողերի վարձավճար	2298,8	2131,7	2131,9	2215,2	2301,3	2315,6
2	Գույքի վարձավճար ներ	---	---	---	---	---	---
3	Տեղական վճարներ	---	---	---	---	---	---
4	Այլ ոչ հարկային եկամուտներ	---	---	---	---	---	---
5	Տեղ.ինք.մար. պետ.կոդմ.լի ազ.իր.հ.մ.	---	---	---	---	---	---
Դ	Պաշտոնական տրանսֆերտ ներ,դոտացի ա	15265.1	15265.1	16100.0	16500,0	17124,0	17235,2
Ե	Եկամուտներ,						

	կապիտալի գործառնություններից	---	---	---	---	---	---
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ	---	---	---	---	---	---
Է	Ֆոնդային բյուջե	---	---	---	---	---	---
6	Բյուջեի կատարում%	95,8%	100%	100%	100%	100%	100%

3.3 ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԱՊԱՌՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանին բնորոշ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմանների /կարկտահարության, երաշտ, ցրտահարություն/, ոռոգելի հողատարածքների բացակայության, համայնքի բնակչության սոցիալական վատ պայմանների կողմից տարված անհետևողական աշխատանքի հետևանքով հողի սեփականաշնորհումից ի վեր սեփական եկամուտների գծով համայնքում կուտակվել են շուրջ 3,2 մլն. դրամի ապառք:

Հողի հարկի ապառքների 10-15տոկոսը անհուսալի են և պատկանում են հողի այն սեփականատերերին, ովքեր շուրջ 10 և ավելի տարիներ ընտանիքով բացակայում են հանրապետությունից, իսք նրանց հողերը կամ չեն մշակվում կամ էլ առանց համապատասխան պայմանագրի ու պետական գրանցման օգտագործվում են նրանց հարազատների ու մտերիմների կողմից: Գյուղապետարանը իրավական հիմքեր չունի նշված ապառքները դատական կարգով հողի փաստացի օգտագործողներից գանձելու համար, իսք աշխատանքի բերումով արտերկրում հայտնված

համայնքի անդամներին հողի սեփականությունից զրկելը հարցի լուծման իրատեսական տարբերակ չի համարվում:

Գույքհարկի անհուսալի ապառքները պատկանում են տրանսպորտային միջոցների այն սեփականատերերին, ովքեր առանց համապատասխան գրանցման վաճառել են տրանսպորտայի միջոցը, մահացած են կամ բացակայում են հանրապետությունից:

3.6. ՎԵՐՋԻՆ 10 ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

հ	Ծրագրի անվանումը	Իրականացնող կազմակերպու-թյունը	Ծրագրի ընդհանուր բյուջեն	որից		Իրակա-նացման տարե-թիվը
				Դոնոր կազմակ.	Համայնքի ներդրում	
1	Բուժ. մանկաբարձ. կետի կառուցում	«ՇԵՆ»բարեգ. կազմակերպ.	12.000.0 ԱՄՆ դոլար	10.000.0 ԱՄՆդոլար	2.000.0 ԱՄՆդոլար	1999թ.
2	Ջրամատակարարման ն/տ ցանցի նորոգում	ՄԱԿ-Ի ՀՊԾ ՍԱԴ ծրագիր	3500 մ/օր 400.0հ.դր.	3500 մ/օր	400.0հ.դր.	2006թ.
3	Ջրամատակարարման ն/տ ցանցի նորոգում	ՄԱԿ-Ի ՀՊԾ ՍԱԴ ծրագիր	3500 մ/օր 300.0հ.դր.	3200 մ/օր	300.0հ.դր.	2007թ.
4	Գյուղապետարանի շենքի նորոգում	ՄԱԿ-Ի ՀՊԾ ՍԱԴ ծրագիր	3500 մ/օր 600.0հ.դր.	4000 մ/օր	600.0հ.դր.	2007թ.
5	Ճանապարհների փոսային նորոգում	« ՎՀԱ » ծրագիր	1500.0հ.դ	1000.0հ.դ.	500.0հ.դ.	2007թ.
6	Ջրամատակարարման ն/տ ցանցի նորոգում	« ՎՀԱ » ծրագիր	2000.0հ.դ.	1300.0հ.դ.	700.0հ.դ.	2008թ.
7	Խմելու ջրագծի կառուցում, ՕԿՋ-ի ծերականգնում	ՀԲ-ի « ԳԲԱԾ» Ծրագիր	19000.0հ.դ.	17200.0հ.դ	1300.0հ.դ.	2007թ.
8	Գյուղ. տեխնիկայի գնում	ՀԲ-ի « ԳԲԱԾ» Ծրագիր	10200.0հ.դ	9200.0հ.դ.	1000.0հ.դ	2008թ.

4.ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ,ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԶԵԱԿԵՐՊՈՒՄ:

Ըստ առանձին բնագավառների ծրագրերի ընտրության և առաջնահերթության որոշման համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի նախընտրական ծրագիրը և համայնքի ղեկավարի նախընտրական քարոզարշավի ժամանակ համայնքի ընտրողների կողմից տրված պատվիրանները:

Ծրագրեր իրականացման ,արժեքների գնահատման և հնարավոր ֆինանսավորման աղբյուրների բացահայտման համար հիմք են հանդիսացել տեղական բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը,ՀՀ կառավարության տարածքային զարգացման ռազմավարությունը և հանրապետությունում գործող ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների հետ հաստատած համագործակցության կապերը:

2017-2021թթ նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

ԾՐԱԳԻՐ թիվ 1

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի մշակույթի տան վերանորոգում,գույքի ապահովում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքի մշակույթի տունը կառուցվել է 1960թ և մինչև օրս հիմնական նորոգման չի ենթարկվել:Մշակույթի տունը համայնքի բնակչության հանգստի և ազատ ժամանցի կազմակերպման միակ օբյեկտն է :այնտեղ է տեղակայված գյուղական գրադարանը իր 12000 կտոր գրականությամբ:

Մշակույթի տան քայքայվածության և անբարեկարգ վիճակի պատճառով մշակույթային միջոցառումներ գրեթե չեն կազմակերպվում և այն հիմնականում չի ծառայում համայնքի կարիքների համար:Մշակույթի տունը ապահովված չէ նաև անհրաժեշտ գույքով և սարքավորումներով:Համայնքի ուժերով վերջին տարիներին հնարավոր է եղել միայն մասնակիորեն նորոգել մշակույթի տան տանիքի առանձին հատվածներ:

Տեղական բյուջեի սահմանափակ միջոցներով հնարավոր չէ իրականացնել մշակույթի տան հիմնանորոգման գույքի բարելավման մեծածավալ աշխատանքներ: Այսծրագրի իրականացման համար անհրաժեշտ է պետական մարմինների կամ միջազգային ներդրումային կազմակերպությունների ու հիմնադրամների աջակցությունը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Նորոգել մշակույթի տունը, այն համալրել ժամանակակից գույքով և հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակել և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին / ՀՍՆՀ / ներկայացնել մշակույթի տան նորոգման և գույքի համալրման ծրագիրը:
- Հարցի առնչությամբ դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աջակցությանը:
- Ապահովել ծրագրի կառավարումը և աշխատանքների կազմակերպումը:
- Ապահովել ՀՍՆՀ ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող 10 տոկոսի ներդրումը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մշակույթի տուն Նորոգման և այն ժամանակակից գույքով, երաժշտական գործիքներով և սարքավորումներով համալրելու շնորհիվ հարմարավետ պայմաններ ստեղծել համայնքի բնակչության հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման, երիտասարդների մշակութային ու գեղագիտական դաստրարակության համար:

Կանխել մշակույթի տան հետագա քայքայումը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ըստ նախնական հաշվարկների ծրագրի իրականացման համար կպահանջվի 30.0 մլն. դրամ, որի 10 տոկոսը պարտավորություն է ստանձնում ապահովելու համայնքը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ծրագիրը նախատեսվում և իրականացնել 2017թ. ընթացքում:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Գուսանագյուղ համայնքի ղեկավար՝ Վասակ Ղազարյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 2

ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

ՀՀ Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում:

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքն ունի 4.0կմ. ընդհանուր երկարության ներհամայնքային ճանապարհներ, որից ասֆալտապատ է միայն բնակավայրով անցնող միջհամայնքային ճանապարահատվածը / 1.5կմ./ : Ներհամայնքային խճապատ ճանապարհների առանձին հատվածներ ամբողջությամբ քայքայված են և տրանսպորտային միջոցների համար դարձել են անանցանելի:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար ապահովել բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի դարձնել համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհները:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ուսումնասիրել ներհամայնքային ճանապարհների տեխնիկական վիճակը, ճշտել նորոգման ծավալները և կազմել թերությունների ակտ :
- Ճանապարհների նորոգումը կատարել խճապատման, սալարկման և մանրահատիկ ավազե ծածկույթի իրականացման միջոցով:
- Ծրագրի օժանդակ աշխատանքներն իրականացնել « Վարձատրվող հասարակական աշխատանքներ » ծրագրի շրջանակներում:
- Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերը, տրանսպորտային և տեխնիկական միջոցները ապահովել տեղական բյուջեի և համայնքի ներդրումների հաշվին:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի տրանսպորտային և հետիոտն երթևեկության համար կապահովվի բարեկարգ և հարմարավետ ճանապարհներ: Երթևեկելի կդառնան համայնքի քայքայված և անանցանելի ճանապարհահատվածները:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

.Նախատեսվում է իրականացնել 2,5կմ/15000քառ մ/ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ:

.Ծրագրով նախատեսված աժանդակ աշխատանքների իրականացման համար <<Վարձատրող հասարակական աշխատանքներ>>ծրագրի շրջանակներում ներգրավել է 4.5մլն դրամի ներդրում այդ թվում՝

2017թ-2.0մլն դրամ

2018թ-2.5 մլն դրամ.

.Ծրագրի իրականացման համար պահանջվող շինարարական նյութերի ,տրանսպորտային և տեխնիկական միջոցների ապահովման համար տեղական բյուջեից կատարվել է 2.5մլն դրամի ներդրում այդ թվում՝

2017թ-1.0մլն դրամ

2018թ-1.5 մլն դրամ.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգման աշխատանքները նախատեսել՝

2017թ-1.0 կմ -6000 քառ մ

2018թ-1.5 կմ -9000 քառ մ

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Գուսանագյուղ համայնքի ղեկավար՝ Վասակ Ղազարյան:

Ծ Ր Ա Գ Ի Ր թիվ 3

Ծրագրի Անվանումը

ՀՀ Շիրակի մարզի Գուսանագյուղ համայնքի մարզադաշտի նորոգում:

ՀԻՄՆԱՂՆԴՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Գուսանագյուղ համայնքի մարզադաշտը կառուցվել է 1987թ և վերջին 20 տարիներին մատնված լինելով անուշադրության՝ քայքայվել ու թալանվել է:

Մարզադաշտը կառուցված է տիպային նախագծով և այն նորոգելու դեպքում բավարար պայմաններ կապահովվի համայնքի երիտասարդների ֆիզիկական դաստիարակության և հատկապես ֆուտբոլ մարզաձևի զարգացման համար:Հնարավորություն կնձեռվի վերականգնելու Գուսանագյուղ համայնքի ֆուտբոլային թիմի բարի համբավը,որը խորհրդային տարիներին տարածաշրջանում ճանաչում է ունեցել որպես լավագույն գյուղական ֆուտբոլային թիմ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է համայնքի մարզադաշտի նորոգման միջոցով հարմարավետ պայմաններ ապահովել համայնքի երիտասարդների ֆիզիկական դաստիարակության և հատկապես ֆուտբոլ մարզաձևի զարգացման համար:

ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

.ՈՒսումնասիրել մարզադաշտի տեխնիկական վիճակը,ճշտել նորոգման ծավալները,կազմել թերությունների ակտ և նախագծանախահաշվային փաստաթղթեր:
.Նախկինում ձեռք բերված համաձայնության համաձայն, համագործակցել Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի հետ և ապահովել ծրագրի իրականացման համար վերջինիս կողմից պարտավորված 4.0մլն դրամ գումարի,մարզագույքի և հագուստի տրամադրումը:

.Ծրագրի իրականացման համար տեղական բյուջեից հատկացնել 1.5մլն դրամ:

.Կազմակերպել մարզադաշտի նորոգման շինարարական աշխատանքները:

.Հասարակական հիմունքներով մարզադաշտի նորոգման շինարարական աշխատանքներին ներգրավել համայնքի երիտասարդությանը:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մարզադաշտի նորոգման շնորհիվ հարմարավետ պայմաններ ապահովել համայնքի երիտասարդների ֆիզիկական և հատկապես ֆուտբոլ մարզաձևի զարգացման համար:

ԾՐԱԳՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

.Նախատեսվում է իրականացնել մարզադաշտի հարթեցման և բարեկարգման ,տրիբունայի նստարանների և ցանկապատի վերականգման,հանդերձարանների, հանգստի սենյակների և սանհանգույցների նորոգման աշխատանքներ:

.Ծրագրի ընդանուր բյուջեն կազմում է 5.5 մլն դրամ ,որից 4.0 մլն դրամը կներդրվի ՀՖՖ կողմից և 1.5 մլն դրամը՝ համայնքի բյուջեից:

.ՀՖՖ-ի կողմից ծրագրին կտրամադրվի նաև մարզագույք և մարզահագուստ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համաձայն ՀՖՖ-ի ղեկավարության հետ ձեռք բերված նախնական համաձայնության՝ մարզադաշտի նորոգման ծրագրերի կատարումը նախատեսել 2018-2019թթ-ին:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Գուսանագյուղ համայնքի ղեկավար՝ Վասակ Ղազարյան:

Ծրագրի աջակիցներ՝ համայնքի ավագանու անդամներ:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

N	Ցուցանիշի անվանումը	Չափի միավոր	2017թ. փաստացի	2018թ. կանխատեսում	2019թ. կանխատեսում	2020թ. կանխատեսում	2021թ. կանխատեսում
1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	2352.7	2352.7	2352.7	2352.7	2352.7
2	Բնակչության թիվը	մարդ	1056	1058	1073	1085	1097
3	Տն. տնտեսությունների թիվը	ընտ.	249	251	252	253	255
4	Ծնունդը		8	10	12	12	12
5	Մահացությունը	մարդ	6	*	*	*	*
6	Աշխատունակ բնակչություն.	մարդ	609	614	618	622	626
7	Զբաղվածները ընդամենը այդ թվում ըստ տնտեսության ճյուղերի՝	մարդ	501	505	509	512	515
	ա/ գյուղատնտեսություն /թերի բեռնվածությամբ/	մարդ	410	412	414	416	418
	բ/արդյունաբերություն		-	-	-	-	-
	գ/շինարարություն	մարդ	22	24	26	27	28
	բ/ ծառայությունների ոլորտ.	մարդ	65	65	65	65	65
	դ/այլ ոլուտներ	մարդ	4	4	4	4	4
8	Գործազրկության մակարդակը	%	20	18	16	14	12
9	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	4	4	4	4	4
10	Համայնքային սեփականության վարելահողեր	հա	386.0	386.0	386.0	386.0	386.0
11	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	100.0	100.0	100.0	100.0	100.0
12	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկայությունը	կմ	3.0	3.0	3.0	3.0	3.0
13	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-
14	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	-	-	-	-	
15	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	8	8	8	8	8
16	Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	4.0	4.0	4.0	4.0	4.0
17	Ընդամենը բնակ -ֆոնդ այդ թվում՝	հատ/ք.մ	222 28660	222 28660	222 28660	222 28660	222 28660
	-Համայնքային	հատ ք.մ	4 320	4 320	4 320	4 320	4 320
	-Մասնավոր բնակ. ֆոնդ	հատ ք.մ	218 28340	218 28340	218 28340	218 28340	218 28340

18	Բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	28	30	32	34	36
19	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լիտր/օր	200	200	200	200	200
20	Ջրի կորուստները ցանցում	%	10	8	6	5	5
21	Սովորողների թիվը հանրակրթական դպրոցում	մարդ	163	165	168	168	170
22	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	-	-	-	-	
23	Գյուղապետարանի կենցաղաառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	10	10	10	10	10

Հավելված թիվ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

գույքի անվանումը	Չափի միավոր	քանակը	Տեխնիկական վիճակի բնութագիրը
Գյուղապետարանի շենք	հատ	1	ենթակա է նորոգման
Մշակույթի տուն	հատ	1	ենթակա է հիմնանորոգման
Ժոմպակայան	հատ	1	շահագործման ենթակա չէ
Մարզադաշտ	հատ	1	ենթակա է հիմնանորոգման
ՕԿՋ	հատ	2	օգտագործվում է
Խմելու ջրի ներտնտեսային համակարգ	կմ	4.5	ենթակա է նորոգման
Գրադարանի գրքային ֆոնդ	հատ	1	ենթարկված է ֆիզիկական մաշվածության
Հուշարձան	հատ	1	ենթակա է նորոգման
Գերեզմանատուն	հատ	1	
Ն երհամանքային ճանապարհներ	կմ	4.0	ենթակա է նորոգման
Բույ մանկաբարձական կետ	հատ	1	ենթակա է նորոգման
համակարգիչ	հատ	1	օգտագործվում է
տպիչ	հատ	1	օգտագործվում է
գազի վառարան	հատ	3	օգտագործվում է
սեղան և դիմադիր	հատ	2	օգտագործվում է
աթոռներ	հատ	13	օգտագործվում է
հեռուստացույցի ապակյա տակդիր	հատ	1	օգտագործվում է
հագուստի պահարան	հատ	1	օգտագործվում է
փոքր ապակյա սեղան	հատ	1	օգտագործվում է
շերտավարագույր	մառ/մ	10	օգտագործվում է

Հավելված թիվ 3

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. *Գյուղատնտեսական հողատեսքերը*

Հողատեսքի անվանումը	հա	որից օգտագործվում է, հա
Ընդամենը գյուղտնտեսական հողատեսքեր	2094.5	1448.6
Վարելահող	913.8	913.8
Բազմամյա տնկարկներ	---	---
Խոտհարքներ	4.0	4.0
Արոտավայրեր	995.0	400.0
Այլ գյուղատնտեսական հողեր	40.9	---

2. *Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքը*

Ցանքատարածությունների կառուցվածքը	2013թ.	
	հա	%
Ցորեն	400.0	49.0
Գարի	300.0	37.0
Բանջարեղեն	4.0	0.5
Կարտոֆիլ	10.0	1.2
Կերային մշակաբույսեր	100.0	12.3

Ընդամենը	814.0	100.0

3. Հմնական մշակաբույսերի համախառն բերքը և բերքատվությունը

Մշակաբույսերի տեսակները	2013թ.
Հացահատիկային մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	1050
1 հա -ի բերքատվությունը	1.5
Կարտոֆիլ	
Համախառն բերքը, տոննա	150.0
1հա -ի բերքատվությունը, տ/հա	15.0
Բանջարեղեն	
Համախառն բերքը, տոննա	14.0
1 հա -ի բերքատվությունը	3.5
Կերային մշակաբույսեր	
Համախառն բերքը, տոննա	300.0
1 հա -ի բերքատվությունը	3.0

4. Անասնագլխաքանակը

/ գլուխ /

Գյուղ. կենդանիների տեսակները	01.01.2013թ.
Խոշոր եղջերավոր անասուններ	875
որից՝ կովեր	618
Խոզեր	180
Ոչխարներ և այծեր	1220

Թռչուններ	2216
Մեղվաընտանիքներ	400

5.Անասնապահական մթերքների արտադրության ծավալները և անասունների մթերատվությունը

Անասնապահական մթերքի տեսակը	2008թ.
Մսի իրացում,տոննա	25.6
Կաթի արտադրություն, տոննա	988
Բրդի արտադրություն, տոննա	1.9
Ձվի արտադրություն, հազ. հատ	208
1 կովի կաթնատվությունը, կգ	1600
1 ոչխարի բրդատվությունը,կգ	2.0
1հավի ձվատվությունը, հատ	160

6.Համայնքում առկա գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ

Գյուղ. մեքենայի, գործիքի անվանումը	Թափի միավոր	Քանակը
Թրթուրավոր տրակտոր	հատ	18
Անվավոր տրակտոր	հատ	17
Հացահատրկային կոմբայն	հատ	5
Խոտհնձիչ կոմբայն	հատ	1
Բեռնատար ավտոմեքենա	հատ	20
Տրակտորային կցասայլ	հատ	14
Գութան	հատ	18
Կուլտիվատոր	հատ	12
Շարքացան	հատ	8
Խոտ հակավորող մեքենա	հատ	5
Կերամանրիչ	հատ	1

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՏԻՄ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ